

ՆԱԽԱԳԻԾ

արձանագրային որոշում

**ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հավանություն տալ փոստային կապի բնագավառի զարգացման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
-----ի նիստի N ---
-
արձանագրային որոշման

**ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փոստային կապը կարևոր դեր է խաղում հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացում: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և առաջընթացի այս դարում փոստային կապը, որպես հասարակական հաղորդակցության կարևորագույն տարր, ունի իր ուրույն տեղն ու նշանակությունը և զգալի դեր ունի տնտեսության զարգացման, բնակչության կապի պահանջմունքների բավարարման գործում: Այսօր հատկապես փոստն է հանդիսանում կապի ամենահանրամատչելի և անփոխարինելի միջոց մեր հանրապետության հեռավոր շրջանների միջև՝ բնակչությանը մատուցելով ոչ միայն փոստային, այլև տեղեկատվական ծառայություններ:

Շուկայական տնտեսության անցումային պայմաններում մենք կարողացել ենք պահպանել ձեռք բերված բոլոր արժեքները և միաժամանակ պայմաններ ստեղծել փոստային կապի հետագա զարգացման համար: Փոստային կապը, որը մատչելի է բնակչության բոլոր խավերին, այսօր պետք է քայլի ժամանակին համընթաց՝ մատուցելով ժամանակակից բարձր տեխնոլոգիական ծառայություններ:

Փոստային կապն ակտիվ ներգործություն ունի տնտեսության, կառավարման, գործարարության զարգացման և մարդկանց կենսամակարդակի բարձրացման վրա:

Փոստային կապի ծառայություններն առնչվում են տրանսպորտա-լոգիստիկ ծառայությունների (բեռնափոխադրումների և սուրհանդակային կապի գծով), էլեկտրոնային հաղորդակցության (փոստային կապի ծառայությունները մրցակցում, նաև համագործակցում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայությունների, հիբրիդ փոստի, ինտերնետ հասանելիության հետ) և ֆինանսական (կենսաթոշակների և նպաստների վճարում, կոմունալ և այլ վճարումների իրականացում) ծառայությունների հետ: Փոստային կապի

կազմակերպության գործունեության նպատակն է նամակագրական թղթակցության, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների փոխադրությունների գծով տնտեսության, բնակչության և պետական կառավարման մարմինների պահանջարկի բավարարումը:

II. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ծառայությունները մատուցվում են 885 փոստային բաժանմունքների (որից 88 փոստային բաժանմունքը՝ Երևան քաղաքում, 797-ը՝ մարզերում), 29 հենակետերի և փոստի տեսակավորման ու փոխադրման կենտրոնի միջոցով՝ Համաշխարհային Փոստային Միության կոնվենցիայի և միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան: Ներկայումս <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության միջոցով ուղիղ փակ ճեպագրերով աշխարհի 36 երկրների հետ իրականացվում է ծանրոցների առաքում և 33 երկրների հետ նամակների առաքում: 66 երկրների հետ երկկողմանի պայմանագրերի հիման վրա իրականացվում են <<Արագընթաց փոստ>> ծառայություն (EMS):

2. <<Փոստային կապի մասին>> ՀՀ օրենքի համաձայն <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերություն հանդիսանալով Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր պարտավոր է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների (նամակագրական թղթակցության, մինչև 20 կգ. քաշով ծանրոցների և գյուղական բնակավայրերում պաշտոնական պարբերականների առաքման գծով, ինչպես նաև <<Փաստաթղթերի հատուկ առաքման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փաստաթղթերի հատուկ առաքում) մատուցումը:

3. <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվում են նաև հետևյալ ծառայությունները՝

1) Փոստային կապի ծառայություններ՝ նամակների (հասարակ, պատվիրված, գնահատված) առաքում, ծանրոցների (հասարակ, գնահատված) առաքում, միջազգային փոստ, արագընթաց փոստային ծառայություն (EMS):

2) Վճարային ծառայություններ՝ կենսաթոշակների վճարում, կոմունալ վարձավճարների գանձում, դրամական փոխանցումներ:

3) Մանրածախ առևտուր:

4. <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության գործունեության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2006 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1379-Ա որոշմամբ <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնել է «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ հավատարմագրային կառավարման 5 տարի ժամկետով: Հավատարմագրային կառավարչի ծրագրի միջոցով <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության բարեփոխումները ուղղված են արտադրողականության բարելավման, արդյունավետության և երկրի ներսում ծառայությունների մատուցման և այլ համաշխարհային փոստային օպերատորների հետ համադրելի դառնալու մարտահրավերների լուծմանը:

5. ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» N1549-Ա որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայփոստ Թրասթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի միջև 2011թ. դեկտեմբերի 5-ին կնքվել է հավատարմագրային կառավարման պայմանագիր, համաձայն որի Հավատարմագրային կառավարիչը կիրականացնի <<Հայփոստ>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարումը ևս հինգ տարի ժամկետով:

6. Փոստային կապի ազգային օպերատորի ենթակառուցվածքների արդիականացման առաջիկա լայնածավալ ներդրումների իրականացման անհրաժեշտությունից ելնելով ներկայումս քննարկվում է ընկերության բաժնետոմսերի մասնավորեցման նպատակահարմարության հարցը:

7. Հայաստանի Հանրապետությունում բացի փոստային կապի ազգային օպերատորից գործում են ևս 12 փոստային կապի և/կամ սուրհանդակային կապի օպերատորներ, որոնք ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ստացել են փոստային կապի ծառայությունների մատուցման լիցենզիա: Այդ

կազմակերպությունների կողմից մատուցվող փոստային կապի ծառայությունները փոքր մաս են կազմում փոստային կապի ծառայությունների ընդհանուր ծավալի մեջ:

8. Փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայի կառուցվածքը՝ «Բիզնեսը-բիզնեսին», «Բիզնեսը-սպառողին», «Սպառողը-բիզնեսին», «Սպառողը-սպառողին» ձևաչափերը և առևտրային շուկաներում գործարարության զարգացման տարբերակները դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ գործարար հատվածը, որպես փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվող, գրեթե բացակայում է: Հայաստանի Հանրապետության փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայում մեծ մաս է կազմում «Սպառողը-սպառողին» ձևաչափով առևտրային շուկան, ինչը վկայում է ֆիզիկական անձանց միջև հաղորդակցություն մեծ ծավալի առկայության մասին: Այդ ձևաչափով գործող շուկան գնալով նվազում է՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառմանը զուգընթաց, ինչպիսիք են հեռախոսակապը, հեռատիպային կապը, էլեկտրոնային փոստը: Փոստային կապի ծառայությունների մատուցման ընդհանուր ծավալի փոքր մաս է կազմում «Բիզնեսը-սպառողին» ձևաչափով գործող առևտրային շուկան, ինչը ցույց է տալիս, որ «Ապրանքներ փոստով» ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում թույլ է զարգացած՝ չթողնելով զգալի ազդեցություն փոստային կապի ծառայությունների մատուցման ծավալների վրա: Հայաստանի Հանրապետությունում բացակայում է նաև հաճախորդին ուղղված հաշիվների ու քաղվածքների հոսքը բանկերից և կենցաղային ծառայություններ մատուցող կազմակերպություններից: Սահմանափակ են նաև փոստային կապի ծառայություններ մատուցող այնպիսի հիմնական շուկաներ, ինչպիսիք են «Բիզնեսը-բիզնեսին», «Բիզնեսը-սպառողին» ձևաչափով գործող շուկաները, ինչը ցույց է տալիս, որ բազմաբնույթ գործունեություն ծավալող կազմակերպություններին մրցունակ փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններ չեն առաջարկվում:

III. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

9. Հայաստանի Հանրապետության փոստային կապի ադմինիստրացիան ներքին փոստային կապի զարգացմանն զուգահեռ ակտիվ մասնակցում է նաև միջազգային համագործակցության ասպարեզում՝ համագործակցելով

Համաշխարհային Փոստային Միության (ՀՓՄ), օտարերկրյա փոստային կապի ադմինիստրացիաների, միջազգային կազմակերպությունների հետ: Չարգացնելով համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության փոստային կապի ադմինիստրացիան փոստային կապի ազգային օպերատորի համար հնարավորություն է ստեղծում.

1) որպես հուսալի գործընկեր ավելի նպաստավոր դիրքերից հանդես գալ ինչպես ներքին շուկայում, այնպես էլ համաշխարհային փոստային ցանցում.

2) բարձրացնել փոստային կապի ծառայությունների մատուցման արդյունավետությունը, անվտանգությունը, շահութաբերությունը և բարելավել իր աշխատանքը.

3) մատուցել բարձրորակ ծառայություններ, ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայում:

10. Ներկայումս փոստային կապի ազգային օպերատորի կողմից մատուցված ծառայություններից օգտվողներին առաջարկվում են հետևյալ միջազգային փոստային կապի ծառայությունները՝ արտասահման ուղարկել և ստանալ այնպիսի փոստային առաքանիներ, ինչպիսիք են փոստային բացիկները, հասարակ, պատվիրված և գնահատված նամակները, սեկոգրամները, փոքր փաթեթները, փաթեթները, ծանրոցները, “M” պարկները և արագընթաց փոստով փոստային առաքանիները: Փոստի միջոցով կարելի է նաև պատվիրել և ստանալ “ապրանքներ փոստով”, ուղարկել էլեկտրոնային դրամական միջոցների փոստային փոխադրություններ, բաժանորդագրվել արտասահմանյան հրատարակություններին և այլն:

11. Հայաստանի Հանրապետության փոստային կապի ադմինիստրացիայի կողմից միջազգային կապերի զարգացման գործունեությունն ուղղված է առաջին հերթին մատուցվող ծառայությունների ընտրանու ընդլայնմանը, տարբեր կարգավիճակի հաճախորդներին միջազգային փոստափոխանակման գծով մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը:

12. Հայաստանի Հանրապետությունը փոստային կապի բնագավառի զարգացման նպատակով անդամակցում է Կապի Տարածաշրջանային համագործակցությանը (ԿՏՀ) և Համաշխարհային Փոստային Միությանը (ՀՓՄ) :

13. Հայաստանի Հանրապետությունը 1992թ. սեպտեմբերի 14-ից հանդիսանում է Համաշխարհային փոստային միության անդամ: Համաշխարհային փոստային միության անդամ-երկրները կազմում են միասնական փոստային տարածք միմյանց հետ փոստային առաքանիների փոխանակման համար: Միավորելով աշխարհի 192 փոստային կապի ադմինիստրացիաներ, Համաշխարհային Փոստային Միությունը (ՀՓՄ) հանդիսանում է միջպետական միջազգային ներկայացուցչական կազմակերպություններից մեկը: ՀՓՄ-ն հանդիսանում է փոստային կազմակերպությունների համագործակցության գլխավոր համաժողովը, օգնում է ապահովել ժամանակակից փոստային կապի ծառայությունների մատուցման միասնական ցանց, իրականացնում է խորհրդատվական, միջնորդական և փոխկապակցող դեր, անհրաժեշտության դեպքում ցույց է տալիս տեխնիկական աջակցություն: ՀՓՄ-ն սահմանում է միջազգային փոստափոխանակման կանոնները, հանձնարարություններ է տալիս փոստային ծառայությունների ծավալների աճի խթանման և հաճախորդներին ծառայությունների մատուցման որակի բարձրացման գծով:

14. 2012 թվականի սեպտեմբերին Դոհայում տեղի է ունեցել ՀՓՄ-ի XXV-րդ վեհաժողովը, որտեղ ընդունվել է 2013-2016թթ. համար համաշխարհային փոստային ռազմավարությունը, որը գործունեության պլան է կառավարությունների, փոստային կապի ադմինիստրացիաների, տարածաշրջանային միությունների և ՀՓՄ-ի այլ ենթակառույցների համար: Նշյալ ռազմավարությունը ներառում է հետևյալ չորս նպատակները.

1) միջազգային փոստային ցանցի շահագործման փոխգործողության կատարելագործումը.

2) փոստային հատվածին վերաբերող տեխնիկական գիտելիքների և փորձի տրամադրումը.

3) ինովացիոն արտադրանքի ու ծառայությունների առաջարժույթը (եռաչափ ցանցի զարգացում) .

4) փոստային հատվածի կայուն զարգացմանն աջակցումը:

15. Վերը նշված չորս նպատակները բաժանված են ծրագրերի, որոնք հետո ընդգրկում են գործունեության տեսակների որոշակի հավաքածուի:

16. Առաջին նպատակի իրականացման ծրագրերն են՝

1) փոստային ցանցերի հուսալիության ու արդյունավետության, ծառայության որակի բարձրացումը.

2) փոստային առաքանիների պահպանության և անվտանգության բարձրացումը և մաքսային գործընթացների պարզեցման աջակցումը.

3) համապատասխան ստանդարտների և կանոնների մշակումը.

4) ծառայությունների հասանելիության հեշտացման և աշխատանքների ցուցանիշների բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման խթանումը.

5) ազգային փոստային համակարգերի հասցեագրման մեթոդների կատարելագործման աջակցումը:

17. Երկրորդ նպատակի իրականացման ծրագրերն են՝

1) փոստային հատվածի դերի մասին իրազեկման բարձրացումը.

2) անդամ-երկրների կողմից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման ապահովման ընդունակությունների և դրանց մատուցման նկատմամբ հսկողության բարձրացումը.

3) հաճախորդների և շահագրգիռ կողմերի պահանջմունքներին համապատասխան շուկայական և ոլորտային ուսումնասիրությունների իրականացումը.

4) վիճակագրական և ծախսերի հաշվառման վերլուծության մեթոդների կատարելագործումը.

5) շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ուժեղացման նպատակով տեղեկատվության, գիտելիքների և փորձի տրամադրումը:

18. Երրորդ նպատակի իրականացման ծրագրերն են՝

1) փոստային արտադրանքի ու ծառայությունների դիվերսիկացումը և արդիականացումը.

2) նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ շուկայի ծավալների խթանումը.

3) միջազգային էլեկտրոնային առևտրին աջակցումը.

4) փոստային ցանցերի երեք բաղադրիչներով զարգացման շարունակումը:

19. Չորրորդ նպատակի իրականացման ծրագրերն են՝

1) նշանակված փոստային կապի օպերատորների միջև վճարման համակարգերի կատարելագործումը.

2) փոփոխվող շուկայական պահանջների նկատմամբ ՀՓՄ-ի պատշաճ ձևով արձագանքելու ընդունակությունների բարձրացում.

3) փոստային կապի ծառայությունների ավելի լայն կամ նպատակային հասանելիության հաշվին բնակչության համար փոստային կապի ծառայությունների հասանելիության ապահովման աջակցումը.

4) էկոլոգիական խնդիրների և սոցիալական պատասխանատվության մասին իրազեկման բարձրացման աջակցումը:

20. Դոհայի Համաշխարհային փոստային ռազմավարության նպատակն է համաշխարհային տնտեսության կենտրոնում դնել փոստային հատվածը:

IV. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

21. Փոստային կապի ոլորտի զարգացման հայեցակարգի նպատակներն են.

1) ապահովել հանրապետության բնակչության համար փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման բարձր որակ.

2) ընդլայնել փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների ցանկը և բարձրացնել մատուցման որակը՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ.

3) ակտիվացնել փոստային կապի ոլորտում շուկայական մեխանիզմները, ապահովել առողջ մրցակցություն և ստեղծել բարենպաստ պայմաններ ձեռներեցության զարգացման համար.

4) ակտիվացնել փոստային կապի կազմակերպման ոլորտում ներդրումային գործունեությունը.

5) կատարելագործել փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանվածության մեխանիզմները՝ երաշխավորված Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

22. Վերը թվարկված նպատակներին հասնելու համար նախատեսվում է փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման

շուկայական հարաբերությունների պայմաններում սահմանել ոլորտում գործունեություն ծավալած փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորների գործելակերպի այնպիսի կարգավորման սկզբունքներ, որոնք թույլ կտան փոստային կապի ոլորտի շուկայում ապահովել առողջ մրցակցության դաշտ՝ բացառելով ցանկացած տիպի մենաշնորհային դրսևորումներ, որոնք կարող են խոչնդոտել շուկայի հավասարակշիռ զարգացմանը, ինչպես նաև փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման սակագների տնտեսագիտական հաշվարկներով չհիմնավորված բարձր լինելու հանգամանքը:

23. Սույն հայեցակարգի հիմնական նպատակներից է փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայի կայացման ընթացքում հնարավորինս իրատեսական սակագնային քաղաքականության ներդրումը, որի դրույթների և պահանջների կիրառումը հնարավոր կլինի և պետք է ենթարկվի ոլորտը համակարգող պետական մարմինների կողմից մոնիթորինգի, բացառելու համար ոչ միայն մենաշնորհային դրսևորումները, այլ նաև դեմպինգային սակագնային քաղաքականության կիրառումը, ոլորտում գործունեություն ծավալած ցանկացած փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորի կողմից կամ նկատմամբ:

24. Հայեցակարգի հիմնական նպատակներից է նաև փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայում հնարավորինս արդի տեխնիկական միջոցների և տեխնոլոգիաների ներդրումը, որի իրականացումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ոլորտի զարգացումը միջազգային միտումներին համահունչ:

25. Փոստային կապի ոլորտում շուկայական հարաբերությունների հայեցակարգային կարգավորումը դիտարկվում է որպես ոլորտի զարգացման ընդհանուր քաղաքականության բաղադրիչ մաս և կրում է ոչ միայն փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններ մատուցող օպերատորների միջև հարաբերությունները կարգավորող իրավական ակտի բնույթ, այլ նաև միտված է ապահովելու օպերատորների և ծառայություններից օգտվողների միջև փոխհարաբերությունների կարգավորմանը՝ վարվող սակագնային քաղաքականությանը համապատասխան:

26. Հիմք ընդունելով վերոգրյալը, անհրաժեշտ է նշել, որ շուկայական հարաբերությունների կարգավորման սոցիալական ուղղվածությունը, որի վերջնական նպատակն է ապահովել փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման առավել հասանելիություն հասարակության հնարավորինս լայն շերտերի համար: Խիստ կարևորվում է նաև երկրի ներկա սոցիալ-տնտեսական զարգացման փուլում փոստային կապի ոլորտում շուկայական հարաբերությունների զարգացման և դրանց ուղղվածության կանխատեսման համար կարևոր նշանակություն ունեցող ոլորտում գործունեություն ծավալած փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորների կողմից գործարար ծրագրերի իրատեսական մշակումը և դրանց գնահատումը ոլորտը համակարգող մարմինների կողմից, ինչը թույլ կտա իրականացնել ոլորտի զարգացման և հետագայում մրցակցային դաշտի կարգավորման քաղաքականությունը:

27. Գործարար ծրագրերի վերլուծությունը և գնահատումը թույլ կտա կանխատեսել այդ ծրագրերի իրագործումից հետո սպասվելիք իրադրությունը ծառայությունների մատուցման շուկայում և կանխավ մշակել համապատասխան կարգեր և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ իրավական ակտերում՝ բացառելու համար շուկայում առողջ մրցակցությանը խոչընդոտող միտումների առաջացումը:

28. Մինևույն ժամանակ շուկայական հարաբերությունների կարգավորման շղթայում կարևոր նշանակություն ունի նաև փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորների կողմից պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների և ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը, որը թույլ կտա գնահատել գործունեություն ծավալած օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների ինչպես տեսականին և որակը, այնպես էլ վարվող սակագնային քաղաքականությունը, ըստ մատուցվող ծառայությունների տեսակների:

29. Նման վերլուծությունը կարող է հանդիսանալ որպես ուղղորդող տեղեկատվություն՝ գնահատելու համար մատուցվող ծառայությունների շուկայում ծառայությունների մատուցող յուրաքանչյուր փոստային կապի և սուրհանդակային կապի օպերատորի դիրքը, որն անհրաժեշտ է շուկայական հարաբերությունների իրատեսական կարգավորման կազմակերպման համար:

**V. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՀԻՄՔԵՐԸ**

30. Սույն հայեցակարգի մշակման իրավական հիմքերն են՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին>> N 70-Ն որոշման N1 հավելվածի 55-րդ կետի հանձնարարականը, ինչպես նաև <<Փոստային կապի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի դրույթները, որոնք նպատակ ունեն իրականացնել փոստային կապի ոլորտի ինչպես զարգացումն, այնպես էլ փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցմանը միտված քաղաքականության հիմնախնդիրները:

31. Սույն հայեցակարգի մշակման համար հիմք են հանդիսանում նաև.

1) ներկայումս կազմավորված փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայում առողջ մրցակցության ապահովման անհրաժեշտությունը.

2) փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայում գործունեություն ծավալած օպերատորների միջև իրավական փոխհարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը.

3) շուկայական մրցակցության պայմաններում մատուցվող փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների տեսականու և որակի բարելավմանն միտված միասնական քաղաքականության մշակման անհրաժեշտությունը.

4) բնակչության սոցիալական լայն շերտերի համար ծառայությունների շուկայում մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատչելիության և սակագների կարգավորմանն անհրաժեշտ ապահովումը.

5) Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ոլորտի տեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի ապահովման անհրաժեշտությունը՝ շուկայական հարաբերությունների պայմաններում առողջ մրցակցության խրախուսմամբ ոլորտի զարգացման միջազգային միտումներին, ինչպես նաև Դոհայի Համաշխարհային փոստային ռազմավարությանը համահունչ:

**VI. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

32. Փոստային կապի բնագավառի զարգացման հայեցակարգի սկզբունքներն են՝

1) Փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման ոլորտում շուկայի ազատականացման սկզբունքը:

Պետության տնտեսության զարգացման կարևոր ուղղություններից մեկը- շուկայական հարաբերությունների հնարավորին մեծ ծավալներով ներդրումն է, հաշվի առնելով երկրի տնտեսական, սոցիալական, քաղաքական, ինչպես նաև դեմոգրաֆիկ առանձնահատկությունները:

Փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայական հարաբերությունների ներդրման քաղաքականությունը ենթադրում է տնտեսության անցումային շրջանում պետական կառավարման կենտրոնացված համակարգի կազմակերպում:

Հասարակության լայն շերտերի համար կազմակերպվող փոստային կապի ծառայությունների մատուցման շուկան պետք է հնարավորինս զերծ լինի մենաշնորհային ցանկացած երևույթներից, որոնք բերում են մատուցվող ծառայությունների սակագների թելադրանքի և ստեղծում են բարենպաստ պայմաններ շուկայական հարաբերություններում գերշահույթների ստացման, դառնալով զգալի բեռ հասարակության սոցիալապես անապահով շերտերի համար, որոնց առկայությունը տնտեսության անցումային փուլում անխուսափելի է:

Փոստային կապի բնագավառի զարգացման նպատակների և խնդիրների իրականացումը պահանջում է փոստային կապի բնագավառում պետական քաղաքականության կիրառում, հաշվի առնելով ինչպես փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայի ներկա վիճակի առանձնահատկությունները, այնպես էլ այդ շուկայի նշանակությունը երկրի տնտեսության զարգացման գործում: Փոստային կապի բնագավառի պետական կարգավորման քաղաքականությունը պետք է ուղղված լինի այդ շուկայի բազմակողմանի զարգացման խնդիրների լուծմանը:

Փոստային կապի բնագավառի պետական կարգավորման խնդիրներն են.

ա. փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանությունը.

բ. փոստային կապի գործունեության լիցենզավորումը, շուկայում գործող բոլոր մասնակիցների կողմից լիցենզիաների պայմանների կատարման վերահսկողությունը.

գ. ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը.

դ. փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայում մրցակցության զարգացումը.

ե. փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման որակական ցուցանիշների բարձրացումը և դրանց համապատասխանեցումը տնտեսության ու բնակչության պահանջներին.

զ. փոստային կապի ունիվերսալ ծառայությունների ֆինանսավորման մեթոդների մշակումը և կիրառումը.

է. փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների կարգավորումը.

ը. փոստային կապի բնագավառի իրավական կարգավորման համակարգի կատարելագործումը.

թ. փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայի մոնիտորինգի կազմակերպումը:

Որպես կանոն փոստային կապի բնագավառի պետական կարգավորումն ուղղված է հիմնականում փոստային կապի ունիվերսալ ծառայություններին, որի հիմնական խնդիրը փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման համար փոխհատուցման մեթոդների մշակումն ու ներդրումն է, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցման միջազգային մակարդակի ապահովումը:

Ինչ վերաբերվում է փոստային կապի և սուրհանդակային կապի այլ ծառայությունների մատուցմանը, ապա պետական կարգավորման խնդիրը կայանում է նրանում, որ մրցակցության համար ստեղծվեն հավասար պայմաններ, ինչը կխթանի փոստային կապի բնագավառի զարգացումը:

2) Փոստային կապի բնագավառի շուկայում հավասար մրցակցության պայմանների ապահովման սկզբունքը:

Փոստային կապի բնագավառի շուկայում առանձնապես կարևորվում է տնտեսվարող սուբյեկտների միջև հավասար մրցակցության պայմանների ապահովման անհրաժեշտությունը: Փոստային կապի և սուրհանդակային կապի

ծառայությունների մատուցման շուկայում մրցակցության հավասար պայմանների ապահովման համար կարևոր նշանակություն ունի նաև առաջատար տնտեսվարող սուբյեկտների կողմից տիրապետվող տեխնիկական ռեսուրսների արդարացի և ոչ խտրական տրամադրման անհրաժեշտությունը, որը հիմք է հանդիսանում տարբեր սուբյեկտների կողմից տիրապետվող ցանցերի համակցման համար:

Կարևոր նշանակություն ունի նաև փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման սակագնային քաղաքականությունը, որն ի սկզբանե պետք է բացառի գերշահույթների ստացումը որևիցե տնտեսվարող սուբյեկտի կողմից, ինչը հետագայում կստեղծի ոչ հավասար մրցակցային պայմաններ:

3) Փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայում սոցիալական հիմնախնդիրների լուծման սկզբունքը:

Սույն Հայեցակարգի առաջնային խնդիրներից մեկն է սահմանել այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան մոտ ապագայում ապահովել Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ և դժվար հասանելի բնակավայրերը փոստային կապի արդի համակարգերի ինտենսիվ ներդրման համար:

Փոստային կապի ենթակառուցվածքների զարգացումը թույլ կտա սոցիալական լայն շերտերին առաջարկել փոստային կապի ծառայությունների մատուցման լայն տեսականի, իսկ առողջ մրցակցության պայմանների ապահովումը կբերի սակագների առավել նվազեցում սոցիալական լայն շերտի համար:

4) Փոստային կապի բնագավառի ընդհանուր զարգացման ապահովման սկզբունքը:

Փոստային կապի ընդհանուր զարգացումը իր հիմքում ունի առաջին հերթին նորագույն տեխնիկական և տեխնոլոգիական միջոցների ներդրում, որի պայմաններում հնարավոր կլինի ապահովել նաև լայնաշերտ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական հենք: Այս առումով որոշիչ նշանակություն ունի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, նաև ներդրումային բաց քաղաքականության վարումը:

Մեծ կարևորություն ունի փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման միջազգային փորձի ներմուծումը, որի համար

բարենպաստ պայմաններ կարող են ստեղծել բնագավառում աշխարհի առաջատար ընկերությունների և կազմակերպությունների հետ կապերը:

Փոստային կապի ընդհանուր զարգացումը կբերի ոչ միայն տեխնիկական, ֆինանսական, իրավական խնդիրների լուծմանը, այլ նաև կապահովի հասարակության սոցիալական բոլոր շերտերին հասանելի ծառայությունների ընտրանու մեծացմանը:

5) Փոստային կապի բնագավառի կարգավորման իրավական հիմքերի ապահովման սկզբունքը:

Կարևոր նշանակություն ունի փոստային կապի բնագավառի կարգավորման և զարգացման համար համապատասխան իրավական հիմքերի ապահովումը, ինչպես գործող օրենսդրական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարման, այնպես էլ նոր իրավական ակտերի ընդունման ճանապարհով:

Իրավական հիմքերի ապահովման առումով առանձնակի նշանակություն ունի կապի բնագավառի կարգավորման զարգացման և համակարգման գործառույթներ իրականացնող բոլոր պետական մարմինների գործառույթների հստակ տարանջատումը, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերի միասնական գաղափարախոսության ապահովումը:

Առանձնակի նշանակություն է ձեռք բերում տնտեսվարող սուբյեկտների գործունեության, ինչպես նաև մատուցվող ծառայություններից օգտվողների իրավունքների պաշտպանության ապահովումը իրավական դաշտի միջոցով:

Այս առումով անհրաժեշտ է բացառել փոստային և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողների նկատմամբ որևիցե ռեպրեսիվ միջոցների կիրառումը տնտեսվարող սուբյեկտների կողմից, մինչև կարգավորող մարմինների կողմից համապատասխան որոշման կայացումը: Այս սկզբունքը նպատակ ունի գործող կանոնների՝ վերանայման բացառելու համար որևիցե չհիմնավորված թելադրանք օգտվողների նկատմամբ:

Փոստային և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողների հետ հանրային կամ անհատական պայմանագրերը պետք է հնարավորինս համահունչ լինեն միջազգայնորեն ճանաչված Մարդու իրավունքների հիմնադրույթների և լավագույն փորձի հետ:

Միննույն ժամանակ, անհատական կնքվող պայմանագրերում պետք է պարզորոշ նշված լինեն կողմերի պարտականությունները և իրավունքները, ինչպես տեխնիկական խնդիրների առումով, այնպես էլ պարտականությունների իրականացման կարգի առումով:

Օրենսդրական դաշտում փոստային և սուրհանդակային կապի ծառայություններ մատուցող և ծառայություններից օգտվող սուբյեկտների միջև իրավահավասարության պահպանման սկզբունքը պետք է դիտարկվի որպես որոշիչ դրույթ:

33. Փոստային կապի բնագավառի զարգացման հայեցակարգի մեխանիզմներն են.

1) Փոստային կապի բնագավառի շուկայի մոնիթորինգը.

Փոստային կապի բնագավառի շուկայի կարգավորման լծակներից մեկը շուկայի մոնիթորինգն է, որի նպատակն է բացահայտել ոչ միայն տիրող իրավիճակն իր բազմաբնույթ խնդիրներով, այլ նաև հավաքագրել համապատասխան տեղեկատվություն փոստային և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայի կարգավորման և հետագա զարգացման համար:

Ծառայությունների մատուցման շուկայի մոնիթորինգը ներառում է ուսումնասիրությունների հետևյալ ուղղությունները՝

ա. սոցիալական բնույթի խնդիրների ուսումնասիրություն.

բ. տեխնիկական բնույթի խնդիրների ուսումնասիրություն.

գ. ֆինանսական բնույթի խնդիրների ուսումնասիրություն.

դ. իրավական բնույթի խնդիրների ուսումնասիրություն.

ե. կազմակերպչական բնույթի խնդիրների ուսումնասիրություն:

Մոնիթորինգի իրականացումը պետք է լինի պարբերաբար առնվազն տարին մեկ անգամ, ինչը թույլ կտա օպերատիվ ձևով հետևել փոստային կապի բնագավառի ծառայությունների մատուցման շուկայի զարգացման ընթացքին և փուլերին, որի արդյունքը հիմք կհանդիսանա համապատասխան իրավական ակտերի փոփոխման և մշակման համար: Մոնիթորինգի արդյունքները նպատակահարմար է ենթարկել համեմատական վերլուծության միջազգային ցուցանիշների հետ և գնահատել երկրում բնագավառի զարգացման ընթացքը և միտումները:

Մոնիթորինգի արդյունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան կարգ:

2) Վիճակագրական տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը.

Փոստային կապի բնագավառի ուսումնասիրության նպատակով անցկացված մոնիթորինգի արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը կրում է ոչ միայն բնագավառի կարգավորման համար անհրաժեշտ տեղեկատվական բնույթ, այն նաև հանդիսանում է որպես վիճակագրական տեղեկատվություն:

Վիճակագրական տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը կարևոր նշանակություն ունի բնագավառի զարգացման իրատեսական գնահատման համար և թույլ է տալիս ի հայտ բերել հետագա զարգացումների ուղղվածությունը և միտումները:

Վիճակագրական տեղեկատվության վերլուծության արդյունքում հնարավոր է դառնում նախնական պատկերացում կազմել բնագավառի հետագա զարգացման ընթացքի մասին:

3) Հաշվետվությունների մեխանիզմի ներդրումը փոստային կապի բնագավառում տիրող ներկա իրավիճակի գնահատման համար.

Փոստային կապի բնագավառում տիրող իրավիճակի իրատեսական գնահատման համար առանձնակի նշանակություն է ստանում տնտեսվարող սուբյեկտների կողմից հաշվետվությունների պարբերական ներկայացման մեխանիզմի ներդրումը: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում մշակել հաշվետվությունների ներկայացման համապատասխան կարգեր և միասնական ձևեր, ինչպես նաև հնարավորության դեպքում ներկայացվող տվյալների վերլուծության և ստուգման կարգեր, ինչը թույլ կտա առավել իրատեսական կարծիք կազմել բնագավառի զարգացման հիմնախնդիրների լուծման մեխանիզմների մասին:

Ներկայացվող հաշվետվությունները անհրաժեշտ է ուսումնասիրել և վերլուծել բնագավառը կարգավորող մարմինների հետ, ապահովելու համար բնագավառի ընդհանուր զարգացման քաղաքականության դրույթների իրականացումը:

4) Փոստային կապի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների գործարար ծրագրերի վերլուծությունը և գնահատումը.

Փոստային կապի ոլորտում տնտեսվարող սուբյեկտների գործարար ծրագրերի վերլուծությունը և գնահատումն առանձնակի նշանակություն ունի և միաժամանակ թույլ է տալիս կանխանշել հետագայում փոստային և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայում սպասվելիք իրավիճակը, ինչպես նաև բնագավառի ընդհանուր զարգացման միտումները:

Գործարար ծրագրերը նպատակահարմար է ուսումնասիրել, վերլուծել, քննարկել և համաձայնեցնել բնագավառը կառավարող մարմինների հետ, բացառությամբ կոմերցիոն գաղտնիք պարունակող տվյալների: Այդ առումով խնդիր է առաջանում գործարար ծրագրերի կառուցվածքի և բովանդակության նկատմամբ նվազագույն պահանջների առումով (օրինակելի ծրագիր):

Գործարար ծրագրերի համեմատական վերլուծության համար խիստ կարևորվում է գործարար ծրագրերի կառուցվածքային միօրինակությունը, որը զգալիորեն կհեշտացնի գործարար ծրագրերի վերլուծության հետ առնչվող գործառույթների իրականացումը:

34. Սույն Հայեցակարգի իրավական դաշտի ապահովման դրույթների կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել փոստային կապի բնագավառը կարգավորող իրավական դաշտի զարգացում ինչպես գործող իրավական ակտերի փոփոխությամբ, ըստ առաջացող պահանջի և ձևավորվող իրավիճակի, այնպես էլ նոր իրավական ակտերի մշակման և համապատասխան որոշումների և կարգերի ընդունման ճանապարհով:

35. Այս առումով անհրաժեշտություն կառաջանա կատարել համապատասխան փոփոխություններ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է կիրառել համապատասխան մեխանիզմներ, որոնք նոր որոշում ընդունելու համար հնարավորինս կապահովեն փոստային և սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման շուկայի առավել արդյունավետ կարգավորում:

36. Ինչպես նշված է սույն Հայեցակարգի իրավական դաշտի ապահովման դրույթներում անհրաժեշտություն է առաջանում մշակել և ընդունել համապատասխան կարգեր՝ մասնավորապես վիճակագրական տվյալների հավաքագրման, փոստային կապի ծառայությունների մատուցման շուկայում տիրող իրավիճակի մոնիթորինգի անցկացման, ինչպես նաև շուկայում տնտեսվարող

սուբյեկտների կողմից հաշվետվությունների պարբերական ներկայացման վերաբերյալ: Նշյալ կարգերը կոչված են փոստային կապի բնագավառի համապարփակ կարգավորումն ապահովելու համար, ինչը թույլ կտա գնահատել շուկայում տիրող իրավիճակը և կանխատեսել նրա զարգացման միտումները և փուլերը ինչպես տեխնիկական, տեխնոլոգիական, ներդրումային, սոցիալական, իրավական կազմակերպչական առումով, այնպես էլ ապահովել միջազգային ցուցանիշներին համահունչ շուկայական հարաբերություններ, ինչպես տնտեսվարող սուբյեկտների միջև, այնպես էլ նրանց կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների և ծառայություններ մատուցողների միջև եղած իրավահարաբերությունները: